

# Ներդրումային ծրագիր

(Ներդրումային ծրագրի անվանումը)

## Ամփոփ նկարագիր

Ամփոփ նկարագրել ներդրումային ծրագիրը, մասնավորապես՝ ներդրումների պահանջվող գումարը, այլ ներդրողներ (եթե կան), ներդրման տեսակը (նոր ձեռնարկություն, գործող ձեռնարկության ընդլայնում, գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում), արտադրվող ապրանքը կամ տրամադրվող ծառայությունը, վաճառքի պլանավորված ծավալները, գնային քաղաքականությունը, հիմնական սպառման շուկաները, հիմնական մրցակիցները, պահանջվող ֆինանսավորումը, ապրանքի կամ ծառայության ինքնարժեքը, եկամտաբերությունը, պետությունից ակնկալվող աջակցությունը:

## Ծավալը՝ առավելագույնը մեկ էջ

### 1. Ներդրման նկարագրություն

#### 1.1. Ներդրման գումարը

- Պահանջվող ամբողջ գումար,
- Այլ ներդրողներ

#### 1.2. Նկարագրել ներդրման տեսակը՝

- Նոր ձեռնարկություն,
- Գործող ձեռնարկության ընդլայնում կամ կամ աշխատանքների վերսկսում,
- Գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում :

#### Նոր ձեռնարկության դեպքում նշել՝

- Անվանումը,
- Գտնվելու նախատեսված վայրը,
- Սեփականատեր (սեփականատերեր),
- Կազմակերպա-իրավական տեսակը,
- Կազմակերպչական կառուցվածքը, տեղեկություններ ձեռնարկության ապագա տնօրենի, ֆինանսական տնօրենի/գլխավոր հաշվապահի և հիմնական ղեկավար անձնակազմի վերաբերյալ
- Աշխատողների նախատեսվող թվաքանակ,
- Ձեռնարկության նախագծային հզորություն:

#### Գործող ձեռնարկության ընդլայնման կամ վերսկսման դեպքում նշել՝

- Ձեռնարկության անվանումը,

- Գտնվելու վայրը, եթե նոր արտադրական հզորություններ են կառուցվելու՝ դրանց գտնվելու վայրը,
- Ձեռնարկության ընդհանուր նկարագրությունը, ներկայումս կամ նախկինում իրականացվող գործունեության տեսակները,
- Սեփականատեր (սեփականատերեր),
- Կազմակերպա-իրավական տեսակը,
- Կազմակերպչական կառուցվածքը, տեղեկություններ ձեռնարկության տնօրենի, ֆինանսական տնօրենի/գլխավոր հաշվապահի և հիմնական ղեկավար անձնակազմի վերաբերյալ,
- Աշխատողների թվաքանակը նախքան ներդրումը և ներդրումից հետո (ձեռնարկության վերաբացման դեպքում՝ նախքան փակվելը)
- Ընդլայնման տեսակը (նոր արտադրատեսակ/ծառայություն, թե՞ գոյություն ունեցող ապրանքային շարքի ընդլայնում),
- Ձեռնարկության նախագծային հզորություն
- Ընդլայնման դեպքում՝ ձեռնարկության նախորդ երեք տարիների շրջանառության կամ, շահույթահարկի հաշվարկ, հաշվեկշիռ,
- Տեղեկատվություն ձեռնարկության ֆինանսական բեռի (վարկեր, փոխառություններ) և ակտիվների ծանրաբեռնվածության վերաբերյալ:

Ձեռնարկության վերապրոֆիլավորման դեպքում նշել՝

- Ձեռնարկության անվանումը,
- Գտնվելու վայրը, եթե նոր արտադրական հզորություններ են կառուցվելու՝ դրանց գտնվելու վայրը ,
- Ձեռնարկության ընդհանուր նկարագրությունը,
- Ձեռնարկության նոր ուղղությունը և առնչությունը եղած գործունեության հետ,
- Սեփականատեր (սեփականատերեր),
- Կազմակերպա-իրավական տեսակը,
- Կազմակերպչական կառուցվածքը, տեղեկություններ ձեռնարկության տնօրենի, ֆինանսական տնօրենի/գլխավոր հաշվապահի և հիմնական ղեկավար անձնակազմի վերաբերյալ,
- Աշխատողների թվաքանակը,
- Ձեռնարկության նախագծային հզորություն,
- Ձեռնարկության նախորդ երեք տարիների շրջանառության կամ, շահույթահարկի հաշվարկ, հաշվեկշիռ,
- Տեղեկատվություն ձեռնարկության ֆինանսական բեռի (վարկեր, փոխառություններ) և ակտիվների ծանրաբեռնվածության վերաբերյալ:

1.3. Արտադրանքի կամ ծառայության նկարագրություն

1.4. Ձեռնարկության ՈՒԹՀՍ (Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների, սպառնալիքների վերլուծություն

## **Ծավալ՝ առավելագույնը երկու էջ**

### **2. Շուկայի ուսումնասիրություն**

#### **2.1. Ապրանքի/ծառայության շուկայի նկարագրություն**

Անհրաժեշտ է նկարագրել

- Տվյալ արտադրանքի կամ ծառայության պահանջարկը վերջին 3-5 տարիների ընթացքում,
- Շուկայի հիմնական դերակատարներին կամ գերիշխող դիրք ունեցող ձեռնարկությունները,
- Շուկայի թիրախային սեգմենտ:

#### **2.2. Հիմնական սպառման շուկաների նկարագրություն**

Անհրաժեշտ է նկարագրել հիմնական սպառման շուկաները,

- Դրանց աշխարհագրությունն ու ծավալները (ցանկալի է ֆիզիկական և դրամական միավորներով),
- Պահանջարկի դինամիկան հիմնական սպառման շուկաներում: Որպես սպառման հիմնական շուկա պետք է համարել այն շուկաները, որտեղ վաճառվում է ձեռնարկության կողմից արտադրված արտադրանքի կամ մատուցված ծառայությունների 25 տոկոսից ավելին՝ արտահայտված դրամական միավորներով:

#### **2.3. Հիմնական մրցակիցների նկարագրություն**

Անհրաժեշտ է նկարագրել

- Տվյալ շուկայի տվյալ սեգմենտում ընկերության հիմնական մրցակիցներին,
- Շուկայի նրանց զբաղեցրած մասնաբաժինը,
- Մրցակիցների նկատմամբ ունեցած առավելությունները:

**Ծավալ՝ առավելագույնը երեք էջ: Գրաֆիկական պատկերների առկայության դեպքում, առավելագույնը հինգ էջ:**

### **3. Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականությունը**

#### **3.1. Գովազդային և առաջնդման քաղաքականություն**

Անհրաժեշտ է ընդհանրական ձևով նկարագրել, թե ձեռնարկությունը թիրախային սպառման շուկայում/շուկաներում ինչպես է գովազդելու իր արտադրանքը կամ ծառայությունը:

#### **3.2. Տարածման ուղիները**

Անհրաժեշտ է հակիրճ նշել, թե ձեռնարկությունն ինչ ուղիներով է իր արտադրանքը կամ ծառայությունը հասցնելու սպառողներին:

#### **3.3. Գնային քաղաքականություն**

Անհրաժեշտ է նշել, թե ձեռնարկությունն ինչ գնային քաղաքականություն է վարելու համեմատած իր հիմնական մրցակիցների հետ:

**Ծավալ՝ առավելագույնը երկու էջ**

#### **4. Վաճառքի կանխատեսում**

4.1. Վաճառքի ծավալներն արտահայտված ֆիզիկական և դրամական միավորներով, 5 տարվա կտրվածքով:

4.2. Վաճառքի ծավալները հիմնական սպառման շուկաներում արտահայտված արտահայտված ֆիզիկական և դրամական միավորներով, 5 տարվա կտրվածքով:

**Ծավալը՝ առավելագույնը երկու էջ**

#### **5. Ֆինանսական հաշվարկներ**

5.1. Ինքնարժեքի հաշվարկ,

5.2. Ակնկալվող շահույթի կամ շրջանառության հաշվարկ 5 տարվա կտրվածքով,

5.3. Ձեռնարկության ակնկալվող հաշվեկշիռ 5 տարվա կտրվածքով,

5.4. Ձեռնարկության ակնկալվող կանխիկ հոսքերի հաշվարկ 5 տարվա կտրվածքով,

5.5. Ներդրման զուտ զեղչված արժեքը (NPV) կամ եկամտաբերության ներքին տոկոսադրույքը (IRR):

#### **6. Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը**

6.1. Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը

Այս գլխում անհրաժեշտ է հստակեցնել՝

- Ձեռնարկության ազդեցությունը մարզի կամ համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի վրա,
- Նոր ստեղծված աշխատատեղերի քանակը,
- Ձեռնարկությունից եկամուտ ստացող/ձեռնարկության հետ համագործակցող այլ ձեռնարկությունների/անհատների մոտավոր քանակը և նկարագրությունը,
- Տեղական եկամուտների վրա ձեռնարկության ազդեցությունը,
- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում իրականացվող ծրագրերը:

**Ծավալ՝ առավելագույնը երկու էջ**

## **7. Պետությունից ակնկալվող օժանդակությունը և պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն**

### **7.1. ՀՀ Կառավարությունից ակնկալվող օժանդակություն**

Այս բաժնում անհրաժեշտ է հստակեցնել, թե ներդրողը պետությունից ինչ օժանդակություն է ակնկալում՝

- Ենթակառուցվածքի կառուցում, բարեկարգում,
- Խորհրդարարության և/կամ տեղեկարվական աջակցություն,
- Հարկային արտոնություններ,
- Վարկավորում,
- Բաժնեմասային ներդրում ներառյալ վենչուրային ներդրում,
- Երկարաժամկետ լիզինգ,
- Այլ:

### **7.2. Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն**

Անհրաժեշտ է նշել արդյոք ծրագիրն իր մեջ ներառում է պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության տարրեր:

**Ծավալ՝ առավելագույնը երկու էջ**

### **Ծանոթագրություններ.**

1. Պետական միջոցներով վարկային, բաժնեմասային ներդրման և լիզինգի տեսքով տրամադրված աջակցության չափը սկսվում է 30 մլն. ՀՀ դրամից:
2. Վարկային միջոցները չեն կարող ուղղվել շրջանառու միջոցների ձեռքբերմանը:
3. Ձեռնարկատիրության աջակցությանը միտված ենթակառուցվածքների բարեկարգման և կամ ստեղծման տեսքով տրամադրվող աջակցությունը հնարավոր է, եթե մասնավոր ներդրումները գերազանցում են 100 մլն. ՀՀ դրամը:
4. Պետության կողմից իրականացվող ենթակառուցվածքային ներդրումները չեն կարող գերազանցել մասնավոր կամ այլ աղբյուրներից ներգրավված համախառն ներդրումների 35 տոկոսի սահմանը: